# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 137 - Ա

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ, ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի «Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

**1.** Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության պետական սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2025 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ ըստ կազմակերպությունների:

**1.1) «Եղեգնաձորի պոլիկլինիկա» ՓԲԸ**

2025թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 2100600 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 1050300 ՀՀ դրամ:

**1.2) «Վայքի պոլիկլինիկա» ՓԲԸ**

2025թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 90200 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 45100 ՀՀ դրամ:

**2.** Սահմանել, որ կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվում են մինչև 2026 թվականի հոկտեմբերի 1-ը:

2026-06-02 17:32:45 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ. ԱՍԼԱՆՅԱՆ**

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**
**2026 թվական հունիսի 2**
**ք.Եղեգնաձոր**